# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ
## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

31 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 252

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ 06-029-0057-0019 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԻ ՃՇՏՄԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի ԹԻՎ 228 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սեդա Դոխոյանի դիմումը, 11.06.2003թ. թիվ 1722373 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագծերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն կադաստրային հատակագծերում և կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրամանով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, որոշում եմ.

1.Ճշտված համարել 06-029-0057-0019 ծածկագրի, թիվ 1722373 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի հողամասի մակերեսը համաձայն «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի՝ 0.23898 հա, որի սահմանային չափերը համապատասխանում են թիվ 1722373 անշարժ գույքի սեփականության վկայականի հողամասի հատակագիծը բաժնում առկա հողամասի սահմանային չափերին, սակայն մակերեսի չափը գրառված է սխալ:
2. Սեդա Վանոյի Դոխոյանին սեփականության իրավունքով պատկանող 06-029-0057-0019 ծածկագրի անշարժ գույքի տարանջատման արդյունքում, համաձայն «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագծերի առաջացած երկու միավոր անշարժ գույքերին տրամադրել փոստային հասցեներ.

• 0.19221 հա հողամասին և հողամասում առկա շենք, շինություններին՝ ՀՀ Լոռու մարզ Գյուլագարակ համայնք, գյուղ Գյուլագարակ 3-րդ փողոց թիվ 12 բնակելի տուն,

• 0.04677 հա հողամասին՝ ՀՀ Լոռու մարզ Գյուլագարակ համայնք, գյուղ Գյուլագարակ 3-րդ փողոց թիվ 12/1 հողամաս:

3.Ուժը կորցրած ճանաչել 2020 թվականի հուլիսի 15-ի «ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0057-0019 ծածկագրի հողամասի մակերեսը ճշտելու, հողամասի մակերեսի ճշտված և անշարժ գույքի տարանջատման արդյունքում առաջացած միավորներին փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 228 որոշումը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

31 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 253

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գյուլագարակ համայնքի բնակիչ Սեդա Դոխոյանի կողմից ներկայացված դիմումը՝ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0057-0019 ծածկագրի հողամասում ինքնակամ կառույցը օրինականացնելու խնդրանքը, 11.06.2003թ. N 1722373 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» Ա/Ձ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, նկատի ունենալով, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի ղեկավարվելով՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 07.04.2011թ.-ի թվականի 510-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջներով ՝ որոշում եմ.

1.Օրինականացնել Սեդա Դոխոյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող 0.23898 հա հողամասում ինքնակամ կառուցված՝ 59,8462 քմ արտաքին մակերեսով ծածկը, 12,04 քմ բաց պատշգամբը և ինքնակամ բացված 3 (երեք) պատուհանը:
2. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 58.8462 քմ արտաքին մակերեսով ծածկի համար 19750 /տասինը հազար յոթ հարյուր հիսուն / ՀՀ դրամ, 12,04 քմ բաց պատշգամբ համար 3980(երեք հազար ինը հարյուր ութսուն) ՀՀ դրամ, թվով 3(երեք) պատուհանի համար 1650 (հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ: Ինքնակամ կառուցված շինությունների և պատուհանների օրինականացման վճարի չափը կազմում է՝ 25380 /քսան հինգ հազար երեք հարյուր ութսուն / ՀՀ դրամ, որը վճարվում է համայնքի բյուջեի թիվ 900255000078 հաշվեհամարին: Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
3. «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» Ա/Ձ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի հողամասի մակերեսը 0.23898 հա, փաստացի օգտագործվող հողամասի նկատմամբ ճանաչել Սեդա Դոխոյանի սեփականության իրավունքը, որն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 254

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշմամբ՝ որոշում եմ.

ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի տարածքում գտնվող 06-029-0041-0003 ծածկագրի բնակելի տանը և տնամերձ հողամասին՝ 0,22հա, տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գյուղ Գյուլագարակ 1-ին փողոց թիվ 4:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 20 թ. 08 03
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 255

### ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով Բաբկեն Պառավյանի հայտը, որոշում եմ.

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի Չարենցի թիվ 169 հասցեի բնակիչ Գառնիկ Պառավյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 1-ին փողոց թիվ 2 հասցեում հյուրատուն կառուցելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2020թ. 08 04
գ.Գյուլագարակ